Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 114-133 17.03 2025թ.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Արմեն Դիլանյանին

Հարգելի՛ պարոն Դիլանյան,

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2023թ. հոկտեմբերի 16-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/38-1 ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակներում 2023թ դեկտեմբերի 28-ին մատակարարվել է 1-ին չափաբաժնով սահմանված «Olympus մակնիշի CV-190 plus տեսահամակարգի տեսագաստրոսկոպ» բժշկական սարքավորումը:

«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/38» ծածկագրով ընթացակարգի հրավերով, ինչպես նաև N «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/38-1» երկկողմ կնքված Պայմանագրի Հավելված 1՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված է հետևյալ պայմանները «...արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, մոնտաժը, կարգավորումները: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 365 օր»:

2024թ. դեկտեմբեր 10-ին ի հայտ են եկել տեսագաստրոսկոպի աշխատանքի հետ կապված տեխնիկական խնդիրներ, ինչի մասին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր: Համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրի և առաջնորդվելով Պայմանագրի 4.2 կետով, որ հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը և եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը

պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, 2024 թվականի դեկտեմբեր 16-ին «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ երաշխիքային ժամկետում սահմանված կարգով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցել է N ՍԱ-696 գրությունը (կցվում է), որով դիմել Վաճառողին ողջամիտ ժամկետներում սարքավորման վերանորոգումը կազմակերպելու համար:

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից տվյալ գրությանը չի ներկայացվել ոչ մի պատասխան, որից հետո 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ N ՍԱ-705 գրությամբ ևս մեկ անգամ դիմել է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին տեսագաստրոսկոպը վերանորոգման ուղարկելու, ինչպես նաև բժշկական կենտրոնին փոխարինող տրամադրելու համար, քանի որ տվյալ բժշկական սաքավորումը նախատեսված է բացառապես նորածնային և փոքր տարիքի երեխաներին ախտորշիչ ծառայություն մատուցելու համար: «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացրել պատասխան նաև N ՍԱ-705 գրությանը:

Հարկ է նշել, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն հանդիսանում է Օլիմպուս ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում և բացի երկկողմ հաստատված Պայմանագրի դրույթներով սահմանված պարտավորություններից, բացառապես միայն Վաճառողի կողմից կարող է իրականացվել տվյալ բժշկական սարքավորման վերանորոգումն ու սպասարկումը:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն որպես հարցի լուծման տարբերակ նախատեսում է լրացուցիչ գրությամբ դիմել Օլիմպուս ընկերությանը՝ ստեղծված իրավիճակի պարզաբանման և կարգավորման համար, քանի որ միակ պաշտոնական ներակայցուցիչ հանդիսացող «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի պայմանագրային պարտավորությունների չկատարելը խոչընդոտ է հանդիսանում բժշկական կենտրոնի բնականոն գործունեության և պատշաճ բժշկական օգություն ցուցաբերելու գործում: Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և Պայմանագրի 8.11-րդ կետը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ

կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...», առաջարկվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 1,297,800.00 /մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 865,200.00 /ութ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ Հ. ԶՈՀՐԱԲՅԱՆ